17. ԳԵԼ, ԱՂՎԵՍ ՈՒ ԱՐԾԻՎ

Կէղնի չի էղնի մե մարդմ կէղնի։ Էդ մարդը մե մերմ կունենա, էլ բան չի ունենա։

Գելլի կէրթա մե չոլ տեղմ, մեշիմ մեշ տուն կը շինե ու կապրի։

Ինքն էլ լավ ավճի կէղնի, կէրթա միշտ մեշի մեշ ավճուքեն կէնե, կը բերե, մերը կէփե, կուտեն, կապրին։

Մե օրմ էլ գելնի կէրթա մե լավ ղուշմ կը բռնե, բերե կը տուն։ Չի մորթե, պահե կը։

Մե օրմ էլ կէրթա մե աղվեսմ կը բռնե, մե օրմ էլ դելմ կը բռնե, բերե կը տուն, կը պահե։

Վախտմ կանցնի, մե օրմ էլ իրիկունը գուքա, կը տեսնի օր Ղուշն էլ, Աղվեսն էլ, Գելն էլ չայրեքը կախած նստած են։

Էդտեղ տղեն կը զարմանա, կէրթա մոր վրա կռիվ, թե.— էս ի՞նչ բան է, էսօր էսոնց բան չե՞ս տվե ուտելու, օր էսպես չայրեքը կախեր են։

Մերը կըսե.— Ի՞նչ կը խոսիս, հ՚ամմեն օրվանեն շատ եմ տվե։

Տղեն գուքա էդոնց քովը, կըսե.— Իմ Ղուշս, իմ Աղվեսս, իմ Գելս, էդ ի՞նչ բան է, օր հ՚ամմեն օր ուրախ էիք, էսօր չայրեքդ կախեր եք։

Աղվեսը կըսե.— Աստված էլ գիտե, մարդ էլ գիտե, օր մենք ոչ դարդ ունինք, ոչ թալաշ, մեր դարդն ու թալաշը դու ես։ Էսքան վախտ է քու աղ ու հացդ կուտենք, մենք էլ մեզի համար մարդ ենք, դու-

զենք օր էրթանք թագավորի հարսը փախցընենք, բերենք քեզի տանք, օր մեզի լավ աշե։ Մերդ հ՚եդուց մեկել օր կը մեռնի, մեզի վո՞վ պըտի աշե։

Տղեն կըսե.— Շատ լավ, ինչ որ գուզեք, էնպես էրեք։

Բերե՝ Ղշին էլ, Աղվեսին էլ, Գելին էլ կապած տեղերեն կը հ՚արձըկե, կըսե.— Հ՚ուր օր գուզեք, գնացեք։

Էդոնք գելնին գըյնին ճամփա։ Աղվեսը ինքը սատանա, ճամփեն կըսե.

— Թագավորը հարսնիք ունի, կէրթանք հարսնիք, ես կէղնիմ պարբաշի, դու էլ, Գե՛լ, պարի պոչը բռնե, Ղո՛ւշ, դու էլ գելնիս հարսի ֆարտի գլուխը կը թառիս, ես օր գուքամ դուան քովը, դու թևերդ թափ տուր՝ ճրագները թող մարին, հարսին վերու ու հ՚երթըկեն դուս թոցուր։ Ես ու Գելն էլ հ՚ետևեդ գուքանք, կը հասնինք։

Էդպես կըսեն, կէրթան հարսնտուն։ Ղուշը կը թռնի ֆարտի վրեն կը կայնի, Աղվեսն էլ կէրթա պարբաշի կէղնի, Գելն էլ պարի պոչը կը բռնե։ Քանիմ պտուտ օր կը խաղան՝ մեկ էլ Աղվեսը Ղշին հ՚աչքով կէնե, Ղուշը թևերը թափ կուտա, ճրագները բիտտուն կը մարին։ Շենլիքը կը խառնվի հ՚իրար, Ղուշը հարսին կառնե հ՚երթիկեն կը թռնի, Աղվեսն էլ դռնեն դուս կը փախնի, կը մնա Գելը էդ շենլըքի մեջը, կը բռնեն էնքան կուտան օր, դարդը բարեդարը կը հանեն։ Չէ՛, մե կերպովմ փախնի կը, կը պրծընի։ Հըմը, էնպես հերսը հ՚ելած կէղնի օր՝ աստված բեթարեն ազատե։

Ղուշը հարսին կը տանի մե սարիմ գլուխ դիշեցնե, Աղվեսն էլ կէրթա կը հասնի Ղշին։ Կը նստին, կը սպասեն օր Գելը գա հասնի։ Գելը տնքտնքալով, հ՚արունլվիկ էղած գուքա։ Աղվեսը կը հասկնա օր հերսը շատ է հ՚ելած, հ՚առաջ կէրթա, կըսե.

— Տնաշեն, ընչի՞ ես չայրեդ կախե, թագավորի հարս փախցընելը ղոլայ չէ, կերսարը դու ես, դու օր չքաշես էդոր նեղութենը, խո մենք քաշելու չենք։ Հ՚եգուց մեկել օր հարսը քու ձեռներուդ պըտի շուր լցնե, ոտքերդ մաժե, մենք հա՛ էղած, հա՛ չէղած։

Աղվեսն օր էդ խոսքը կըսե, Գելը ինքն իրան կուռի, հերսը գիշնի։ Գելնին, հարսին կը դնեն Գելի շալակն ու կէրթան։

Մեկ էլ Աղվեսը ետ կը դառնա կաշե օր, ի՞նչ տեսնի, էնպես մե ղոշունմ գուքա, օր աստղին համրանք կա՝ էդոնց չկա։

Աղվեսը կըսե.— Արեք իսի յառի[1] տակը պայ մտնինք, ղոշունն օր գա՝ բիրտան դուս հ՚ելնինք, ձիանը կը խրտին, մարդիք վրանե-

---

[1] Սար (Մ. Բ.)։

բեն կը թափին, Ղուշ դու կտուցով աչքերը հանե, Գել դու էլ փոր-երը թափե, ես էլ հ'երեսները կը կոծեմ , թե չէ, մեզի կը սրպանեն, հարսին էլ կառնին կէրթան։

Է՜հ, Գելը իշու մեկն էր, Աղվեսը ինչ օր ըսեր՝ խոսքեն դուս չէր դա։ Տեսան օր ղոշունը մոտեցավ, իրեքն էլ մտան մե յառիմ տակ, պույ մտան։

Ղոշունն օր մոտեցավ, բիրտան յառեն դուս էկան, քշեցին ղոշունի վրա։ Ձիանը խրտան, մարդիքը ձիաններեն վար թափան։ Գելը հասածի փորը թափեց, Ղուշն էլ կտուցը կը զարկեր աչքերը կը քոռցրներ, Աղվեսն էլ, դաքը մեջը, հ'երեսները կը կրոծեր։

Էդ ղոշունին էդտեղ վերջացրին։ Գելը հալաքեն ընկավ, էլ տեղեն չէր կրնա ժաժ գա։ Քիչմ նստան դինջացան, Աղվեսն ըսավ.

— Գել ախպեր, ե՛լ հարսը շալկե, էրթանք։

Գելն ըսավ.— Աղվես, ի՛նչ դուս կուտաս, ես ընձի չեմ կրնա տանի, ես հարս կրնա՞մ տանի։

Աղվեսը Ղշին աչքով էրավ, ըսավ.— Մեզի ի՛նչ, կերսարը դու ես, դուզես թողնինք կէրթանք։

Աղվեսն օր էդ խոսքն ըսավ, Գելը կակղցավ, առավ հարսին շալակը. ընկան ճամփա, գնացին։ Գնացին հասան իրանց տիրոջ տունը։

Տղեն իրիկունը էկավ՝ տեսավ օր, ի՜նչ տեսնի, մե լսի կտորմ բերեր նստեցուցեր են տունը։

Մե վախտմ անցավ, հարսի կերսարը կանչեց մե ջադու պառավմ ըսավ.

— Ի՞նչ տամ քեզի, օր էրթաս իմ հարսս գտնիս բերես։

Պառավն ըսավ.— Կշռուվս մեկ օսկի։

Թագավորն էլ խոստացավ,— Բեր,— ըսավ,— կուտամ։

Պառավը հ'ելավ, ձրձումը հեծավ, օձը էրավ ղամչի ու թռավ, էկավ էդ հարսի կուշտը։

Ինքը ջադու պառավ, էնպես լիզու ունիր, օր օձը ծովեն կը հաներ։ Էկավ էդ հարսի քովը, աղաչեց, թե. «Ղարիբ կնիկ եմ, ինչ կէղնի մե դիշերմ ղոնախ էնեք»։

Էդ հարսն էլ խղճաց, ղոնախ էրավ։

Օրմ, էրկու օր կեցավ, հարսին ըսավ.

— Հարս ջան, քելե տես ես ինչըղ մե ձիմ ունիմ։

Հարսը կէրթա կը տեսնի օր մե ղոճա ձրձումմ.

— Անա՛,— կըսե,— էսի՞կ է ձիդ։

— Հա՜, ղուրպան քեզի, հրլը մեջը աշե, տես քանի ռանգ բան կա։

Հարսը կուզ կը կենա օր աշե՝ պառավը հրմը հ'ետևեն բոթե կ'ու քցե կը ձրձումի մեջը։ Հեծնի կը, կառնե օձե ղամչին, մե զարկելու պես թռնի կէրթա թագավորի քովը։

Թագավորը բերե, պառվի օսկին կուտա, նորեն հարսնիք կէնե, կը պսակե, կը միամտի։

Թող էդոնք էդտեղ մնան, մենք էրթանք Գիլու, Աղվեսի, Ղշի քովը։

Էդոնք օր դիմանան, օր իրանց բերած հարսին փախուցեր են, Աղվեսը կըսե.

— Տղերք, ամոթ չէ՞ մեզի, օր մենք նորեն չէրթանք բերենք։ Տնաշենի Գել,— կըսե,— գյուվա կերսար ես, հեչ տերը չես էղնի, ե՛լ էրթանք բերենք։

Գելին կէրթան թագավորի քաղքի քովը մե տեղմ պայ կը մըտնին։ Մե օրմ տեսնին կօր թագավորի հարսը էկեր է սեյրան, հրմը վրա գըյնին, ու Ղուշը կը ղարկե ու վեր կը հանե։

Աղվեսը կը փախնի, էդ խեղճ Գիլուն էլի կը բռնեն, մե լա՜վմ կը ծեծեն, անճախ կը թողնե կը փախնի։

Հերսը շատ հ'ելած կէղնի, գուքա օր Աղվեսին բռնե կտոր կտոր էնե։

Աղվեսը կը հասկնա օր հերսը շատ է հ'ելե, կըսե.— Հը՛,— կըսե,— Գել ախպեր, ընչի՞ է հերսդ հ'ելե։

Կ'ըսե.— Հ'ըպը քուկդ մարդկութե՞ն է, ընձի մեննակ թողիր փախար։

Աղվեսը կըսե.— Տնաշեն,— կըսե,— խելքդ չի՞ հասնի, Ղուշը մեննակ տարավ, ես վախեցա թե մեկմ պատահի ձեռքեն խլե, համ էլ օր, ես քեզնեն գյուման ունեի, օր դու բիտտունին կը հաղթես, էնոնք ի՞նչ են օր քու դեմդ։

Էլի Գիլու գլոխը բուբբուի եղ կը քսե, Գելը ձենը կը կտրե։ Բերեն հարսին կուտան Գիլու շալակն ու գըյնին ճամփա կէրթան։

Կէրթան կը հասնին իրանց տիրոջ տունը, կը տեսնին օր տերը ո՛չ ավճութան է գնացեր, ո՛չ էլ գործ կէնե, չայրեն կախեր, նստեր է։ Բիրտան օր կը տեսնի, օր Գելը, Աղվեսը, Ղուշը էլի հարսին բերին, խնդրլուն վեր կը թռնի, կը փաթթվի հարսին։

Բերեն նորեն հարսնիք կէնեն։

Գելը, Աղվեսը ու Ղուշը դուքան էդ տղի աղ ու հացը հալալ կէնեն ու գըլխները կառնին, կէրթան։